Ծուշանիկ Կուրղինյան

Շղթան

Սիրում եմ շղթան . . . որ օղակ-օղակ,
Կուռ սալի վրա մի օր միացավ .
Որ դիվաքրքիշ հանեց աղաղակ,
Մեր ձեռ ու ոտին անխափ տիրացավ:

Որ դարեր, դարեր կնիքով անջինջ
Դարձավ բռնության ձեռքում զենք, խթան .
Ազատ տենչանքին արեց բնաջինջ
Իր ժահրոտ կրծքով . . . սիրում եմ շղթան:

Մի՞թե մի օղակ կարող է ճնշել
Մարդուն բանական, մարդուն այդ հզոր .
Մի՞թե կդառնար կյանքը մութ գիշեր,
Եվ հույսը՝ լույսի խաբուսիկ, անզոր:

Եթե կուռ սալին չարանենգ մի օր,
Ժանգոտ օղակներ չմիանային .
Եվ օգտվելով մտքերից մոլոր
Թշվառ մարդկության կապանք դառնային . . .

Կուզեի, ինձ հետ, դուք էլ սիրեիք
Խորիմաստ կյանքը ժանգոտ շղթայի .
Եվ կյանքի սալին շղթա կազմեիք,

Ձեռքիս տեղ հոգիս ես ձեզ կտայի:

1907 թ. 30 նոյեմբերի, Ռոստով-Դոն